Հասցե՝ Արտաշիսյան 46/1, Երևան 0039
հեռ.՝ 010303010
mc@astvatsamayr.am

«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ»
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

"SOURB ASTVATSAMAYR" Medical Centre JSC

№ ԱՄԿ-725 30.12 2024թ.

«ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ
ՏՆՕՐԵՆ Մ. ՄԱՑԱԿՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Մացակյան,

«Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ-ի միջև կնքվել է N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/1-5 (2024թ հունվարի 29), N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/4-9 (2024թ հունվարի 29), N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2-5 (2024թ հունվարի 29), N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/3-6 (2024թ հունվարի 29), N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/16-2 (2024թ մարտ 15), N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/32-11 (2024թ հուլիս 23) ծածկագրերով դեղորայքի մատակարարման պայմանագրեր, որոնց շրջանակներում «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ-ին՝ 24.12.2024թ-ին ներկայացվել է պատվեր-հայտ է :

Պայմանագրի համաձայն պայմանագրով ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, սահմանվում է 20 օրացուցային օր: Ընդ որում, սույն պարբերությամբ սահմանված ժամկետի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից՝ բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում: Այնուհետև, մատակարարումները պետք է իրականացվեն ըստ փաստացի պատվերների՝ ոչ ուշ քան 3 աշխատանքային օրվա ընթացքում, սակայն միչև օրս պատվերը չի մատակարարվել կամ մատակարարվել է թերի: «Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենին պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 30.12.2024թ. ներկայացրած զեկուցագրի համաձայն՝ «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ-ն սահմանված ժամկետում չի իրականացրել ապրանքների մատակարարումը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Ելնելով վերոգրյալից և հինք ընունելով Պայմանագրի 8.9-րդ կետը «Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է վերոնշյալ պայմանագրերը պատվեր հայտում նշված համապատասխան չափաբաժինների մասով՝ պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017թ մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. պարբերության "*Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը...*"

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկվում է պայմանագիրը միակողմանի լուծելու հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող 7 օրվա ընթացքում «Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի 1570053952390100 հաշվեհամարին վճարել

✓ **որակավորման ապահովման՝**

- N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/1-5 - 22470 /քսաներկու հազար չորս հարյուր յոթանասուն/,
- N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/4-9–406569 /չորս հարյուր վեց հազար հինգ հարյուր վաթսունինը/,
- N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2-5–278510 /երկու հարյուր յոթանասունութ հազար հինգ հարյուր տաս/,
- N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/3-6–70602 /յոթանասուն հազար վեց հարյուր երկու/,
- N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/16-2 –2215745 /երկու միլիոն երկու հարյուր տասնհինգ հազար յոթ հարյուր քառասունհինգ/
- N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/32-11-2175300 /երկու միլիոն մեկ հարյուր յոթանասունհինգ հազար երեք հարյուր/

✓ **պայմանագրի կատարման ապահովման՝**

- N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/1-5 – 14980 /տասնչորս հազար ինը հարյուր ութսուն/
- NՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/4-9–271046 /երկու հարյուր յոթնասունմեկ հազար քառասունվեց/,
- N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2-5 – 19350 /տասնինը հազար երեք հազար հիսուն/
- N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/3-6 – 47068 /քառասունյոթ հազար վաթսունութ /

- N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/16-2- 1528100 /մեկ միլիոն հինգ հարյուր քսանութ հազար մեկ հարյուր/
- N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/32-11-1450200 /մեկ միլիոն չորս հարյուր հիսուն հազար երկու հարյուր/

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ գրությամբ սահմանված ժամկետում ապահովումները չվճարելու դեպքում Պատվիրատուի կողմից կկայացվի պատճառաբանված որոշում, որը կուղարկվի լիազոր մարմին՝ «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացը սկսելու նպատակով:

«Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի տնօրեն՝ Հ. Զոհրաբյան